# Արձանագրություն N 3

## <<ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3>> ծածկագրով ՀԲՄ ընթացակարգով հայտարարված գնման ընթացակարգի հայտերի գնահատման հանձնաժողովի նիստի

ք.Ծաղկաձոր

25 օգոստոս 2022թ.
ժամը 11:00

*Մասնակցում էին հանձնաժողովի*
*նախագահ՝ Ո.Եղիազարյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ*
*անդամներ՝ Ն.Խաչատրյան - համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պաշտոնակատար*
*Վ.Հայրապետյան- համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատար*
*Գ.Առաքելյան- համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետի պաշտոնակատար*
*Ձ.Բաբախանյան- համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար*
*քարտուղար՝ Ա.Ավետիսյան- համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ*

## 1. <<ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3>> ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանության շտկման մասին

---

1.1 Ընդունել ի գիտություն, որ <<CTK>> OOO-ի, <<ԱՆՆԱՐ>> ՍՊԸ-ի, <<Ավետիսյան Շին Մոնտաժ>> ՍՊԸ-ի, <<Գլավդորստրոյ>> ԲԸ-ի, <<Գլոբալ Սերվիսիս Գրուպ>> ՍՊԸ-ի, <<Սուսմետ>> ՍՊԸ-ի, <<Շահարտ>> ՍՊԸ-ի և <<Տուրիստաս>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և սահմանված կարգով շտկվել են <<ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3>> ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանությունները:

**1.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ վերոնշյալ մասնակիցների հայտերը գնահատել՝ բավարար:**

1.3 **<<Թրենդ>> ՍՊԸ-ի** կողմից շտկված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ իրավերի պահաջների նկատմամբ,մասնավորապես.

- *<<Թրենդ>> ՍՊԸ – Մասնակիցը հայտով չէր ներկայացրել իրավերով պահանջվող լիցենզիան: Հանձնաժողովի կողմից նրան ներկայացվել է պահանջ՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է ենթակապալի պայմանագրի պատճենը և ենթակապալառուի լիցենզիան: Հանձնաժողովի որոշման համաձայն՝ մասնակիցը ի սկզբանե հայտով պետք է ներկայացներ փվյալ ընթացակարգին համատեղ գործունեությամբ/կոնսորցիումով/ կամ*

*ենթակապալով մասնակցելու փաստը, ինչն էլ իր կողմից չի կատարվել: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' Կարգի 42-րդ կետը՝ հանձնաժողովի որոշմամբ ''Թրենդ'' ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:*

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

## 2 <<ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3>> ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի միաժամանակյա բանակցություններ հրավիրելու մասին

---

2.1 <<ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3>> ծածկագրով ընթացակարգը հայտարարվել էր ''Գնումների մասին'' օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան, ուստի ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն
որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, բավարար գնահատված Ընկերությունների ներկայացուցիչները (**<<СТК>> ООО, <<ԱՆՆԱՐ>> ՍՊԸ, <<Ավետիսյան Շին Մոնտաժ>> ՍՊԸ, <<Գլավդորստրոյ>> ԲԸ, <<Գլոբալ Սերվիսիս Գրուպ>> ՍՊԸ, <<Ծահարտ>> ՍՊԸ, <<Շինմաստեր>> ՍՊԸ, <<Սումետ>> ՍՊԸ և <<Տուրիստաս>> ՍՊԸ**), հրավիրվում են **գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 31 օգոստոս 2022թ. ժամը 11:00-ին: Բանակցությունների վարման ժամկետ է սահմանվում 30 րոպե: Բանակցությունները տեղի կունենան ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9՝ Ծաղկաձորի համայնքապետարանի շենք հասցեում:**

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

| Նիստին ներկա հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը | Ստորագրությունը |
|---|---|
| *Նախագահ՝ Ո.Եղիազարյան* | |
| *Անդամներ՝ Հ.Բաբախանյան* | |
| *Ն.Խաչատրյան* | |
| *Վ.Հայրապետյան* | |
| *Գ.Առաքելյան* | |
| *Քարտուղար՝ Ա.Ավետիսյան* | |